ԿԱՐԾԻՔ

Արինե Տարոնի Ստեփանյանի <<Զբաղվածության կարգավորման հիմնախնդիրները ՀՀ-ում>> թեմայով Ը.00.02 - <<Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում>> մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Զբաղվածությունը մարդկանց աշխատանքային գործունեության հիմքն է, որը բերում է աշխատանքային եկամուտ, ապահովում է բնակչության անձնական ու հասարակական պահանջմունքների բավարարումը: Բնակչության կենսամակարդակը, կրթությունը, ընտանիքի սոցիալ-տնտեսական վիճակը կախված է զբաղված լինելուց: Զբաղվածության մակարդակի բարձրացումը նպաստում է տնտեսական աճին, նվազեցնում գործազրկությունը:

Զբաղվածությունը նաև մակրոտնտեսական կարևոր ցուցանիշներից մեկն է, այն ունի հստակ արտահայտված սոցիալական բնույթ, քանի որ արտահայտում է ոչ միայն մարդկանց պահանջմունքը եկամտների նկատմամբ, այլև հասարակայնորեն անհրաժեշտ աշխատանք կատարելու նրանց ցանկությունը: Վարձատրվող աշխատանք կատարելու մարդու ցանկությունը, օգտակար գործունեության այս կամ այն ոլորտի առաջնայնությունը, աշխատանքային մասնակցության չափը, մասնագիտության և աշխատատեղի ընտրությունը, աշխատանքային մոտիվացիան, բարձրարդյունավետ աշխատանք կատարելու և ունենալու շահագրգռվածությունը, այս բոլորը պայմանավորում են հասարակության մեջ մարդու սոցիալական կողմնորոշվածությունը:

Վերոնշյալներից էլ բխում է զբաղվածության կարգավորման անհրաժեշտությունը, որի հիմնախնդիրների վերլուծությանն էլ նվիրված է գրախոսվող ատենախոսությունը:

Ատենախոսության հիմնական նպատակ դնելով ՀՀ զբաղվածության մակարդակի համալիր վերլուծությունը և դրա վրա կարգավորիչ ազդեցության գործոնների գնահատման մեթոդաբանության մշակումը, հեղինակը աշխատանքում առաջադրել և

լուծել է ՀՀ աշխատանքի շուկայի հետազոտմամբ զբաղվածության կարգավորման տեսական հիմքերի և գործառույթների, ՀՀ-ում միջազգային փորձի կիրառման հնարավորությունների, զբաղվածության մակարդակի վրա ազդող գործոնների և ցուցանիշների փոխկապակցվածության, պետական կազավորման արդյունքների գնահատման, շահառուների սպասումների տեսանկյունից զբաղվածության կարգավորման արդյունավետության գնահատման մեթոդաբանության խնդիրները:

Ատենախոսության գիտական նորույթը կայանում է նրանում, որ ատենախոսը ՀՀ աշխատանքի շուկայի կառուցվածքային տեղաշարժերի գործոնային վերլուծություն կատարելով, առաջարկում է անհրաժեշտ վստահության աստիճանով ռեգրեսիոն մոդել, որտեղ ներկայացված է ՀՆԱ-ի փոփոխությունների վրա գյուղատնտեսության և առևտրի ոլորտներում կարգավորման ներգործությունը, ինչպես նաև զբաղվածության մակարդակի փոփոխությունները՝ դրամական տրանսֆերտներից, միջին աշխատավարձից, ներմուծման և արտահանման իրական ծավալներից կախված: Այնուհետև մշակվել է զբաղվածության պետական կարգավորման արդյունքների գնահատման մեթոդաբանություն, որը թույլ է տալիս առանձին ոլորտների և գործիքների կիրառման ազդեցությամբ ներկայացնելու բնակչության սոցիալ-տնտեսական լարվածության թուլացման ուղիները, ինչպես նաև շահառուների սպասումների հիման վրա առաջարկվել է զբաղվածության կարգավորման արդյունավետության գնահատման հայեցակարգ:

Անհրաժեշտ վստահության աստիճանով ռեգրեսիոն մոդելից ատենախոսը եզրահանգել է, որ գյուղատնտեսության ոլորտում զբաղվածների թվի 1% աճը կարող է հանգեցնել տվյալ տարվա ՀՆԱ-ի աճին 0.6 %-ով, իսկ առևտրի ոլորտում՝ 4,7%-ով:

Եզրակացություններում մանրամասն խոսվում է նաև արտերկրից դրամական փոխանցումների, ՀՆԱ-ի իրական ծավալների ինդեքսի, միջին ամսական աշխատավարձի, ներմուծման և արտահանման իրական ծավալների աճերի ազդեցությունը զբաղվածության վրա (էջ 126):

Եզրահանգումներ են արված նաև միջազգային փորձի ուսումնասիրման արդյունքներից և ՀՀ-ում դրանց հնարավոր կիրառման մասին (էջ 127, 128)։ Առաջարկվել է նաև զբաղվածության պետական կարգավորման արդյունավետությունը գնահատող ցուցանիշ (էջ 129)։

Ատենախոսն ունի թվով 7 գիտական հոդվածներ, որոնցում զետեղված են ատենախոսության հիմնական դրույթներն ու արդյունքները։

Ատենախոսությունը զերծ չէ նաև թերություններից, որոնք հետևյալներն են։

1. Ինչպես հայ տնտեսագիտական մտքի շատ դրսևորումներում, այս դեպքում էլ հստակ չէ նաև հեղինակի մոտեցումը՝ ասել աշխատանքի առաջարկ, թե աշխատուժի առաջարկ։ Որպես ցայտուն օրինակ կարող է լինել էջ 80-ի գծապատկերը, որի վերևում գրված է աշխատանքի առաջարկը, իսկ գծանկարի ներսում՝ աշխատուժի առաջարկը։ Պետք է ասել, որ փաստորեն նույնացվում են այդ երկու արտահայտությունները։ Բայց հենց ինքը հեղինակը էջ 30-ում գրում է, որ <<Աշխատուժը իր մեջ ներառում է զբաղվածներին և գործազուրկներին>>, բայց հետո շարունակում է ..<<ովքեր ապահովում են աշխատուժի առաջարկը>>։ Եթե ասում ենք ապրանքի առաջարկ, հասկանում ենք, որ շուկայում վաճառվում է այդ ապրանքը, բայց եթե ասում ենք աշխատուժի առաջարկ, նշանակում է մարդիկ, այսինքն զբաղվածները և գործազուրկներն են վաճառվում։ Բայց 21-րդ դարում մարդկանց վաճառքը հանցանք է դիտվում։ Կամ էջ 18-ի 2-րդ պարբերությունում ասվում է <<աշխատանքի գինը>>, իսկ էջ 11-ի 2-րդ պարբերությունում՝ <<աշխատուժի գինը>> , ի դեպ վերջինս հնարավոր է չափել միայն մարդկային կապիտալի արժեքը հաշվարկող բավականին բարդ բանաձևերով։

2. Ժամանակակից տնտեսագիտությունը տարբերում է 4 արտադրական գործոններ՝ աշխատանքը, ձեռնարկատիրական ձիրքը, կապիտալը և հողը։ Իսկ

ատենախոսության հեղինակը էջ 10-ի 3-րդ պարբերությունում ասում է, որ <<...աշխատուժը արտադրական գործոններց մեկն է հանդիսանում...>>:

3. Էջ 125-ում, 2-րդ կետում բնութագրելով արդյունավետ զբաղվածության ցուցանիշները, ատենախոսը չի նշում ամենակարևորը, որ այն պետք է ապահովի արժանապատիվ եկամուտ և բարեկեցություն:

4. Աշխատանքում առկա են նաև անհասկանալի մտքեր: Էջ 11- 2-րդ պարբերության 3-րդ տողից սկսած ասվում է <<Որոշ գործատուներ, որոնք տնտեսական ճգնաժամի պատճառով ընկել են տնտեսական վատթար վիճակի մեջ, նույնպես կրճատում են աշխատատեղերի արժեքի կրճատումը..>>, ինչպես նաև տառասխալներ (էջ 4, 6, 23, 24, 127 և այլն):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սակայն նշված թերությունները զգալիորեն չեն ազդում աշխատանքի վերջնական գնահատականի վրա:

Գրախոսվող ատենախոսությունն ավարտուն գիտական հետազոտություն է, որի հիմնական դրույթները և առաջարկությունները օգտակար կարող են լինել զբաղվածության քաղաքականություն մշակողների համար:

Ատենախոսի գիտական հրապարակումներն արտահայտում են հետազոտության հիմնական արդյունքները

Մեղմագիրն արտահայտում է ատենախոսության հիմնական դրույթները և դրա սեղմ շարադրանքն է:

Ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին առաջադրվող պահանջներին, իսկ դրա հեղինակը Արինե Տարոնի Ստեփանյանն արժանի է Ը.00.02 -<<Տնտեսության, նրա ոլորտների

տնտեսագիտություն և կառավարում>> մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս, ԵՊՀ
Կառավարման և գործարարության ամբիոնի
պրոֆեսոր, տնտեսագիտության թեկնածու Ա.Հ.Համբարձումյան

Ա.Հ.Համբարձումյանի ստորագրությունը հաստատում եմ:

ԵՊՀ գիտական քարտուղար,
բանասիրական գիտությունների թեկնածու Մ.Վ.Հովհաննիսյան
05.12.2022թ.